ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ ԴՐԱՄ
ՂՐԿԵԼՈՒ ՀԱՍՑԷ
M. BENIARD.
22, Ormiston Road,
Shepherd's Bush.
London, W. [Angleterre]

*Ամէն բան ժողովրդի միջոցով, ժողովրդի կամքով և ժողովրդի համար:*

*Իւրաքանչիւրի և ընդհանուրի հաւասարապէս բարեկեցիկ կեանք — դա է ճշմարիտ ազատութիւն:*




ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԷՆ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ

ՏԱՐԵԿԱՆ · · · 5 Փր.
ԿԻՍ ՏԱՐԻԱՆ · 3 „
ՄԻ ՀԱՄԱՐԸ · ½ „

*Ժողովուրդ, դու ինքդ միայն կարող ես ձեռք բերել քո ազատութիւնը:*

*Արեան ճահիճներ — ահա ազատութեան ճանապարհը:*

*Ժողովուրդ, մի աղերսիր, այլ պահանջիր և ձեռք բեր:*


ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ | ԼՈՆԴՈՆ | Nr 1 ՄԱՅԻՍ Nr 1 | 1895 | ՄԻԱՄՍԵԱՅ


## ԱՐԵԱՆ ՄԷՋ



ՄԷԿԸ, ՈՐ ԽԵՂԴՎՈՒՄ Է · · · ԵՒ ՄԻՒՍԸ, ՈՐ ԾՆՎՈՒՄ Է · · · ·

## ԴԷՊԻ ԲԱՂԴԱԴ.




ՆՈՐ ԽՐԳ. — „ԹԷ ՈՐ ՏԵՂԸ ՀԱՍԱՑ ՍԱԴ.“
„ԱՅՆ ԷԼ ԿԱՍԵՄ ԻՆՁ՝ Դ.ՕՁԱԴ։“

Գլխամասը... այո, ես անիկա կը ճանչնայի։ Վաղն ալ, երբ Հայաստանը „բարենորոգվի“ Եւրոպային „հսկողութեամբ“ և վեհափառ փատիշահին „անօրինութեամբ“, երէկուան գայմագամն, և այսօրուան փաշան վաղուան մի վալի կըլայ... „բարենորոգված“ Հայաստանի մէջ...

### ՈՒՐԻՇՆԵՐԻ ՄՏՔԵՐ.

Այն, ինչ ցանկանում են ամենալաւերը — և միայն ամենալաւերը — ժամանակակից մարդկանցից, իրագործվում է, միայն ուշ, որովհետև ամենալաւ մարդիկն իրանց ժամանակից աւելի առաջ են գնում, և այդ պատճառով նրանց ցանկութիւններն ու պահանջները ժամանակակից են դառնում միայն յետագայ սերունդների ժամանակը։ Բայց այն, ինչ ցանկանում է ընդհանրութիւնն, իրագործվում է շատ շուտ։

Լ. Բեօռնէ.

Լոյս տեսաւ

„ԴՐՈՂԱՓԱՐ“ Nr 2

և

„ՇԻՐԻՆ ԱԼԻ“, ՀԵՂ. ԱԽԲԱՐ—ՌԱՄԻԿԻ

ԼՕՆԴՕՆ. “ՀՆՉԱԿ„-Ի ՏՊԱՐԱՆ.

ներ են եկեր։

— Այս մէկ ամենապատւական տեղ ցոյց կուտամ ձեզ այսօրուան համար, ասաց նրանցից մէկ ուրիշը. — մենք գոնէ մէկ օրուան համար կարող ենք անցունել, գիտէք ու՞ր... գետնի տակ, ճիշդ դժոխքի մօտ, ջլամբոլի մէջ։

— Հաւատացէք, շատ լաւ գիւտ է այդ եւ շատ լաւ ալ խորհուրդ է, ասաց մօրուքաւորը. այդպիսով գոնէ խաշող օդի ազդեցութենէն ալ կազատվինք եւ պաղ ջուր կունենանք այսօր։

— Լաւ, բայց եթէ ամենքս մէկտեղ պաշարված մնանք ջլամբոլի մէջ, բացականչեց Մխիթարը. որը մինչեւ այդ ժամանակ ինքն իրան խորհում էր հրացանին վրայ յենված։

— Այ խայըր սէօյլէմէզ, ասաց մօրուքաւորը, իր հինգ մատներով Մխիթարի գլխին խփելով. չը գիտե՞ս, որ թուրքի խելքը միշտ կարճ է. նա քեզ նման այդքան ալ խորը չի կրնար խորհիլ, թէ այդ ջիների բնակարանի մէջ մարդիկ ալ կը բնակին. եւ եթէ մինչեւ անգամ կասկածի ալ՝ չի համարձակիր վար իջնալ. նա իր մորթը այդքան ալ աժան ծախողներու տեսակէն չէ, քանի որ իրեն համար երկու վտանգ կայ, ջիները եւ մենք։

Մօրուքաւորի խօսքերը բաւական համոզիչ թւացին միւսներին. յոգնութիւնը մի կողմից, քնատութիւնը միւս կողմից արդէն սկսել էին անդիմադրելի կերպով թուլացնել նրանց, հետեւաբար համաձայնվեցան գնալու։

Թողնելով իրանց դիրքը, նրանք կամաց-կամաց և զգուշութեամբ սկսան ցած իջնել։ Քաղաքում արդէն սկսվել էր շարժում։ Աղօտ քարայատակների վրայից առաջացող կառքերի անիւներից բարձրացած աղմուկը լեցրել էր ամբողջ փողոցը։ Զօրականների զանգակները ձայների այլ և այլ եղ և էջերով հնչում էին հարաւային ու հիւսիսային բողազներից. նրանք իրանց ժամ բարովն էին ասում։ Մուաղինների աղանի կլկլոցը, եկեղեցիների կոչնակների ղընղընկոցը, շների քաղաքի ղանաղան կողմերից բարձրացած սուր ոռնալու ձայները միախառնված՝ աններդաշնակ աղմուկ էին հանել մի ժամ առաջ խոր քունի մէջ խորասուզված քաղաքում։

— Տղե՛րք, քաղաքն արթնցաւ, շուտ արէք, ասաց մօրուքաւորը։

— Մի մարդ այսօր չը պիտի կրնայ արթնանալ քթի տակիցը մրթմրթաց Մխիթարը։

— Գլուղն ողորմի հոգուն, ասաց Արշակը, որ մինչեւ վերջը լուռ էր մնացել. եւ ինքն իրան պարծենում էր, որ իրան թոյլ չէին տալիս մատնիչներին իրենց պատիկ ու մեծերով ոչնչացնել։

Նրանք արդէն հասել էին ջլամբոլի մուտքի բերանը։ Վիթխարի քարանձաւը սոսկում էր ազդում իր տեսքով. կարծես նրան թանձր ու շօշափելի խաւարով լեցրած լինէին։ Առաւօտեան առաջին անզօր լոյսը հազիւ կարողացել էր ջլամբոլից մի քանի քայլ միայն ներս թափանցել։ Չղջիկները լոյսից խոյս տալով իրարու ետեւից ներս էին քաշվում դէպի ջլամբոլի խորքերը։

— Ահա, մեր ընկերները, ասաց Մխիթարը ծաղրելով եւ ցոյց տալով նրանցից խաշխարներին, որոնք ներս մտնելուց առաջ՝ մի քանի շրջաններ գործեցին մուտքի բերանում, ասես, իրանց այս անակնկալ հիւրերի վրայ զարմացած։

— Ներսէս մեզ կուսումնասիրեն, կատակով իր ընկերներին դիմեց մօրուքաւորը։ Առտուն կանուխ այդպիսի հիւրընկալութիւն անշուշտ իրենց կեանքին մէջ չեն տեսեր։ Բայց ու՞ր մնաց Արշակը, ասաց նա, իր չորս կողմը նայելով. — ինչո՞ւ այս թեւաւոր լաւեսններու քանի մը հատը գետին չը փռեր։

„Ջլամբոլին“ մի պատմական հնութիւն է։ Նա փորված է Քրիստոսից շատ առաջ Միհրդատների ժամանակ, երբ Պոնտոսն ինքնիշխան տիրում էր Սեւ ծովի հարաւային ու հիւսիսային արեւելեան մի մեծ մասին։ Ա.. քաղաքն այդ ժամանակ իր ամենազարգացած վիճակումն էր։ Լինելով միակ դուռը մի կողմից փոքր Հայքի եւ միւս կողմից՝ Պոնտոսի, նա կենտրոնավայր էր վաճառականութեան։ Նշանաւոր էր նաեւ իր ամրութիւններով։ Նրա բերդը համարվում էր անառիկ ու համբաւաւոր բերդերից մին, որի մէջ մեծն Միհրդատ իր կեանքին վերջ տվեց՝ դաւաճանվելով իր հարազատ որդուց։ Միհրդատի մահից վերջ քաղաքին յաջորդաբար տիրացան Հռոմայեցիները, Յոյները, և Սելջուկեանները։ Այս վերջինների տիրապետութեան, իբր յիշատակ՝ քաղաքի հարաւային ծայրը դեռ կիսականգուն մնացած է մի հսկայ շէնքի մնացորդ, Ալաջա-մինարէ կոչված մզկիթը։ Սրանցից վերջ քաղաքն անցաւ Օսմանցիների ձեռքը։ Նա այժմ բոլորովին կորցրած է իր նշանակութիւնը թէ առեւտրական եւ թէ զարգացման տեսակէտից։ Քաղաքի հին հռչակաւոր շէնքերից, նրա փառաւոր անցեալից մի քանի մնացորդներ կան կիսաքանդ վիճակում։ Դրանք են՝ յիմարանոցը, Ալաջա-մինարէ եւ բերդը, որ կառուցված է հարիւր մետրից աւելի բարձր միապաղաղ ցից ժայռի գագաթին։

(Կը շարունակվի)

Վ. Խթ.